ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի և ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 17.3 կետի պահանջներով,

հաշվի առնելով Պալատի խորհրդի 26.12.2013թ. թիվ 33/2-Լ որոշմամբ հաստատված Պալատի աշխատակազմի հաստիքացուցակը,

նկատի ունենալով Պալատի աշխատակազմի ծառայողական լիազորությունների համապատասխանեցումը գործող հաստիքացուցակին՝

Հրամայում եմ՝

1. Պալատի նախագահի 14.10.2013թ. թիվ 10-Լ հրամանով հաստատված Պալատի աշխատակազմի ծառայողական լիազորությունների շրջանակը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել Պալատի նախագահի 14.10.2013թ. թիվ 10-Լ հրամանի 2-րդ հավելվածը:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

05 փետրվար 2014թ.
ք. Երևան
թիվ 10-Լ